ՄԵԾ ԵՂԵՌԻ 50 ՏԱՐԻՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

Սոցիալիստական Աշխատանքի Հերոս

Հիսուն տարի առաջ կատարվեց պատմության մեջ աննախադեպ մի ոճրագործություն, որին զոհ գնաց աշխատասեր ու շինարար հայ ժողովրդի արևմտահայ հատվածը։ Թուրքական պետության ազդայնամոլ ղեկավարները, օգտագործելով նպաստավոր առիթը, երբ Արևմտյան Հայաստանի զենքի ընդունակ բոլոր տղամարդիկ կանչված էին բանակ և անպաշտպան էին մնացել կանայք ու երեխաները, ոտնահարելով մարդկային ամենատարրական իմբրոնումները, նենգորեն իրագործեցին հայերին բնաջնջելու նախօրոք մշակած ծրագիրը։ Տղամարդկանց բանակում զինաթափ անելուց հետո մաս-մաս գնդակահարեցին։ Պոլսի մտավորականության 1915 թ. ապրիլի 24-ի դիշերը ձերբակալեցին, աքսորեցին երկրի խորքերը, խոշտանգեցին։ Նույն ապրիլ ամսին սկսվեց անպաշտպան հայ ժողովրդի զանգվածային ջարդը. տեղահան արվեցին բոլոր հայերը, խլեցին նրանց ունեցվածքը և տարագրելով դեպի հարավ՝ ճանապարհներին կոտորեցին ամենաբարբարոս միջոցներով, չխնայելով ո՛չ հիվանդներին, ո՛չ հղի կանանց, ո՛չ ծծկեր երեխաներին և ո՛չ էլ զառամյալ ծերունիներին։

Պատմական Հայաստանի գեղեցիկ բնաշխարհը ներկվեց անմեղ հայերի արյունով։ Հարյուր հազարավոր դիակներ օրերով մնացին անթաղ, դարձան գազանների կեր։ Ամայացան տասնյակ հայաբնակ քաղաքներ, հազարավոր գյուղեր։ Մարդասպանները կատաղի վայրագությամբ քանդեցին, ավերեցին, թալանեցին տարիների ընթացքում կառուցված տները, տնկված այգիները, մշակված պարտեզները։ Գերեզմանատների վերածեցին վարդաստանները։

Անլուր ողբերգություն էր, որ կատարվեց մեծ պետությունների աչքի առաջ։ Թաքուն չէր ոճիրը, գիտեր ամբողջ աշխարհը՝ մարդասիրությունից, մարդկայնությունից ճառող «քաղաքակիրթ» աշխարհը։

Զարմանալի կերպով փակ մնացին այդ պետությունների աչքերը և՛ ոճիրի պահին, և՛ նրանից հետո։ Նրանք հանգիստ դիտեցին աշխարհով մեկ ցրված հայ գաղթականների տառապանքը, լսեցին նրանց հայրենաբաղձ ու արդարացի աղաղակները։ Լսեցին ու լռեցին։

Եւ հիմա, աշխարհի չորս կողմը ցրված հայերը նշում են մեծ եղեռնի հիսնամյակը, մատուցելով պատշաճ հարգանքը մոտ երկու միլիոն զոհերին, ուզում են միաժամանակ ամոթի խարան դրոշմել այն մարդկանց դեմքին, որոնք իրագործեցին ոճիրը և մնացին անպատիժ։

Պետք է նշվի հայ ժողովրդի համար նվիրական այս պատմական օրը, նշվի երկյուղածությամբ ու մեծ հարգանքով, բայց ոչ լաց ու կոծով։ Դա հայ ժողովրդին հատուկ չէ։ Եղեռնը մեր ժողովրդի պարտությունը չէր, փոքրոգի, ենթակա թշնամու բարոյական պարտությունն էր։ Ապացույց՝ վերածնված այսօրը մայր հայրենիքում և գոյությունը Սփյուռքի, որը ամենադժվարին պայմաններում տոկում է, համբերում, պահում ազգությունը, լեզուն, պայքարում ձուլման դեմ, սպասում։

Պետք է գրվի մեծ եղեռնի մասին ամբողջ ճշմարտացիությամբ, թող աշխարհը մի անգամ էլ իմանա, թե ինչի ընդունակ են եղել բռնակալները։ Պետք է ցույց տրվի, թե ովքեր էին զոհերը, ովքեր՝ ոճրագործները։ Զոհը աշխատասեր հայ ժողովուրդն էր, որը պայքարում էր բնության դեմ, բնության նվաճման համար, ճանաչում էր իր լեռն ու քարը, սարն ու ձորը, բուսականությունը, ծնվել, ապրել էր այնտեղ, երբեք չէր մտածում արշավել ուրիշ ժողովուրդների վրա, կոտորել մարդկանց։ Նրա մղած պատերազմները, սկսած Ավարայրի ճակատամարտից մինչև Մուսա լեռան քառասուն օրերը, մղվել են իր անկախության, ինքնուրույնության պահպանման համար։ Կռվել է իր գոյությունը պահպանելու համար, ոչ ուրիշների գոյությանը վերջ տալու, իր մարդկային արժանապատվությունը պաշտպանելու համար, ոչ ուրիշների արժանապատվությունը վիրավորելու, իր ընտանեկան սրբությունը պահպանելու, համար, ոչ ուրիշների սրբությանը վնասելու։ Հայ ժողովուրդը մշակույթ ստեղծող ժողովուրդ է եղել, հռոմեական լեգեոնների դեմ պայքարելու տարիներից իմացել է տաճարներ, պալատներ կառուցել, թատրոն հիմնել, բյուզանդական արշավանքներին դիմագրավելիս՝ ստեղծել է գրականություն, թուրքական և պարսկական բարբարոսական տիրակալության տարիներին անգամ մի կողմից տոկացել է թուրք ենիչերիների ու պարսիկ ֆարաշների սարսափներին, մյուս կողմից չի մոռացել մագաղաթների վրա դրոշմել իր իմաստությունը, այդ մագաղաթները զարդարել գունագեղ նկարներով։ Իր համար չի ստեղծագործել միայն։ Նրա հազարամյակների մշակույթը իր համամարդկային վեհ ձգտումով պատկանում է բոլոր ժողովուրդներին, ամբողջ մարդկությանը։

Հայ ժողովուրդը իր մշակույթով նպաստել է ետ մնացած ժողովուրդներին, այդ թվում հինգ-վեց դար իր վրա իշխող թուրքերին։ Հարյուրավոր տարիներ, գերազանցորեն հայ ճարտարապետներն ու շինարարներն են կառուցել Թուրքիայի պետական ու հասարակական կարևորագույն շենքերը, կոթողները, որոնք այսօր էլ զարդարում են հնօրյա Կոստանդնուպոլիսը և մյուս քաղաքները։ Սկսած XVII դարից՝ մոտ երկու հարյուր տարի մեծ մասամբ հայերն են

եղել արքունի ճարտարապետները, նկարիչները, մանրանկարիչները, արվեստագետ ոսկերիչները։ Հայերն օգնել են տպագրության գործի տարածմանը Թուրքիայում, եղել են թուրքական տպագրական տառերի բարեփոխողները, հիմնել են թատրոններ, նպաստել երաժշտության զարգացմանը։ Հայ ժողովուրդը շատ բան է կատարել այդ երկրի բարգավաճման, մտավոր վերելքի համար։ Իսկ ինչո՞վ են հատուցել թուրքական իշխանավորները զարավոր մշակույթ ունեցող ժողովրդին — տեսական կոտորածներով, ջարդերով, թալանով։ Մնում էր միայն դիմել ինքնապաշտպանության։ XIX դարը ազատություն բերեց թուրքական գերիշխանության տակ տառապող բազմաթիվ ժողովուրդների՝ հույներին, սերբերին, բուլղարներին։ Հայ ժողովուրդը ի վերուստ ստրուկ մնալու սահմանված չէր։ Նա էլ դիմեց ազատագրական պայքարի, ցանկանալով իր հայրենիքում ազատ ապրել, զերծ մնալ տեսական հալածանքներից։ Հոյթունից (1862) մինչև Սասուն (1895), մինչև Մուսա լեռ (1915) այդ պայքարի շղթաներն են, ազատաբաղձ մի ժողովրդի արդարացի ընդվզումը բարբարոս գերիշխանության դեմ։ Հայկական այդ հուզումները հպարտությամբ միայն կարող են լցնել մեր ժողովրդի սիրտը։ Դրանք նրա հայրենասիրական նկարագրի, տոկունության արտահայտություններն են։ Բուսական ու կենդանական աշխարհն անգամ ունի ինքնապաշտպանական բնազդը, պայքարում է իր գոյության համար. մարդը, բնության գերագույն էակը կարո՞ղ է զրկված լինել այդ տարրական իրավունքից։

Անհավասար կռվում ընկավ հայ ժողովրդի մի մեծ հատվածը։ Թուրքական յաթաղանից փախած ու Կովկաս թափված հազարավոր մարդկանց ես տեսել եմ էջմիածնի ու Երևանի փողոցներում — կանայք, երեխաներ, կմախքացած, մարդկային կերպարանքը փոխած գժբախտներ, որոնց համաճարակը հնձում էր ահավոր սաստկությամբ։ Հիսուն տարի է անցել այդ մղձավանջային օրերից, բայց այժմ էլ դեռ տեսնում եմ ոսկրացած այդ մարմինները էջմիածնի պատերի տակ։

Ո՞վ էր պատասխանատուն այս ահռելի ոճիրի։ Անշուշտ երիտասարդ թուրքերի ղեկավարները և նրանց մեծ խորհրդատու կայզերական Գերմանիան։ Բայց պատասխանատու են նաև այն պետությունները, որոնք հանդիստ դիտեցին մի ժողովրդի ողջակիզումն ու մարտիրոսագրությունը։ Օգնության կանչող ձայները, մարդասիրական կոչերը մնացին անարձագանք, ձայն բարբառո հանապատի։ Պետություններ, քաղաքական գործիչներ, որոնք երբեմն ազնիվ էին բարձրացնում անգամ առանձին անհատների սպանության առիթով, անտարբեր մնացին մի ամբողջ ժողովրդի ողբերգության հանդեպ, և ոչինչ չձեռնարկեցին մեծ ոճիրը կասեցնելու համար։

Հակառակ մանկասպանների երազների՝ չմեռավ հայ ժողովուրդը։ Նա իր վերածնված հայրենիքում մի քանի տասնամյակում այնպիսի զարթոնք ապրեց, որ հազվադեպ է մարդկային պատմության մեջ, բայց ապրելով ու վերածնվելով, նա իր սրտի խորքում միշտ պիտի պահի երկու զգացմունք՝ իր արդարհատանքը նրա արյունը թափող, այդ արյունը սակարկող պետությունների նկատմամբ և հարգանքը հայրենիքի, սեփական մշակույթի, ժողովրդի պահպանման համար ընկած մարդկանց նկատմամբ, այն ազնիվ, աշխատասեր գեղջուկների, որոնք քրտինքով պարարտացված հողին խառնեցին իրենց մաքուր արյունը։ Հայ ժողովուրդը իր սրտում վառ պիտի պահի նահատակված հազարից ավելի այն մտավորականների հիշատակը, որոնք ծնվել էին հարա-

զատ ժողովրդի ծոցից, սնվել նրա դարավոր իմաստությամբ և մաքառում էին նրա ապագայի համար։

Այս մեծ սուգը միայն հայերի սիրտը չէ, որ մորմոքում է, այլև այն բոլոր ժողովուրդների, որոնք գիտեն հարգել ժողովուրդների ազատությունը, արժանապատվությունը։ Նրանք մեզ հետ միասին, մեր չափ, անկեղծորեն հուզվում են ու վերապրում այսօր՝ պատմության մեջ աննախընթաց այս մեծ ու ահավոր ոճիրը, որը չպետք է թույլ տալ որ կրկնվի, երբե՛ք և ո՛չ մի տեղ։